սիրեց մեզ։ Եկէք, մենք ևս մեր ձայնը միացնենք հրեշտակների ձայնին և երգենք. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։

Գերմաներէնից Թարգ. Արտակ վարդապետ

ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

(Баку)

.... Հայերի մէջ Ծնունդն ու Մկրտութիւնը մի և նոյն օրը միասին, այսինքն յունուարի 6-ին տօնելու սովորութիւնը ունի իւր պատմական հիմքը։

Ինչպէս վկայում են հայ եկեղեցու հայրերը և միւս ազգերի ժամանակագիրները, քրիստոնէութեան առաջին դարերում մինչև 5-րդ դարի սկիզբը այն ժամանակի քրիստոնեայ բոլոր ժողովուրդները Քրիստոսի Ծնունդն ու Մկրտութիւնը Հայերի պէս կատարում էին մի և նոյն յունուարի 6-ին։ Յետոյ մի քանի պատճառների հետևանքով, այս կրկնակ տօնը բաժանուեց երկու առանձին տօնների. Մկրտութիւնը յունուարի 6-ին, իսկ Ծնունդը տեղափոխուեց դեկտեմբերի 25-ը։

Երուսաղէմի քրիստոնեաները նախկին կարգը փոխեցին այն պատճառով, որ նրանք մի և նոյն օրը պէտք է կատարէին Ծննդեան տօնը Բեթղեհեմում, իսկ Մկրտութեանը՝ Յորդանան գետում, որը շատ դժուարին էր լինում, յիշեալ սուրբ տեղերի միմեանցից հեռաւորութեան, ճանապարհների վատութեան և ձմրան ցրտերի պատճառով։ Դրա համար Ծնունդը բաժանեցին Մկրտութիւնից և տեղափոխեցին դեկտեմբերի 25-ը, որ հնար ունենան այս տօները առանձին, պատշաճաւոր հանդիսաւորութեամբ կատարել, ճոխ հանդերձանքով։

Լատիններն ու յոյները ուրիշ պատճառ էին առաջ բերում, առարկելով հեթանոսական սովորութիւնը, որ յարատևում էր քրիստոնէութեան ժամանակ էլ։ *

Նրանք սովորութիւն ունէին յունուարի 1-ին պատուել Յունուար կուռքի յիշատակը, իսկ փետրուարի 2-ին՝ Պրոզերպինա կոյսի յիշատակը, որին որպէս թէ դժոխքի աստուած Պլուտոնը առևանգել է, ինչպէս պատմում է Հռոմայ Մարկոս Աւրեղիոս կայսրը (գլ. XVI)։

Հեթանոսական սովորութիւնները ժողովրդի յիշողութիւնից բոլորովին ջնջելու համար՝ յոյն և լատին եկեղեցիների հայրերը որոշեցին Ծնունդը դեկտեմբերի 25-ին տօնել. ըստ այսմ ութերորդ օրը, այն է յունուարի 1-ին՝ գալիս է Յիսուսի թլփատութիւնը, որով փոխւում է հեթանոսական Յունուարի տօնը, իսկ քառասներորդ օրը, Պրոզերպինա կոյսի յիշատակի օրը՝ գալիս է Տեառն ընդառաջը։



* Հռոմայեցիները դեկտեմբերի 17-ից մինչև 24-ը այլ հեթանոսական տօն էին կատարում. նոյն տօնը քրիստոնէականացնելու համար ծննդեան տօնը դեկտ. 25-ին սկսան տօնել։